ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ. «ԿՅԱՆՔԻ ԵՎ ԵՐԱԶԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ»[1]

Բանալի բառեր - *Մուշեղ Իշխան, «կրակ», հույսի երազ, հարության խորհրդանիշ, կյանքի հաղթանակ, սփյուռք, հեքիաթի մատանի, ողջունող:*

Ինչպես Անդրանիկ Ծառուկյանն է բնորոշում իր սերնդակիցերին, մանկություն չունեցող մարդկանց բաժին ընկավ չափազանց բարդ հոգեբանական արգելքներ հաղթահարելու, քրիստոնեական կենսափիլիսոփայությունը նոր զուգահեռներում վերարժևորելու ճակատագիրը: Վազգեն Շուշանյանն էլ այդ սերը համարում է «մեծ ու կորստաբեր», թեև մարդկությունը թույն է խառնել իրենց արյունին, բայց հավատով ներշնչված զարմանալի մի լույս մաքրում է այս որբերի արյունը թույնից և լցնում կենսաբեր ավիշով. «Արդարև, կանուխ են հոգիս ճանչցած է երկու հրճվանք ու մարմին, երկու սնունդ, երկու մանանահիշատակն ու երազը»[2]:

Մ. Իշխանին և «Արևելքի տղաքին» նույնպես սնուցում է հայ մշակույթի զարկերակը, որտեղ էլ ապրեին, ինչ գրական ուղղության, հոսանքի կամ փիլիսոփայության էլ դավանած լինեին, ներքին անբացատրելի ուխտով նրանք նայեցին մեկ ուղղությամբ ու ապրեցին մեկ սկզբունքով՝ իրենց համազգային ողբերգության վրեժը լուծել ապրելով և արարելով՝ ուղենիշ ունենալով երազը: Մ. Իշխանը մտածում էր իր մեծ ուսուցչի՝ Լևոն Շանթի նման, որ լավատեսությունը կյանքը իմաստավորում է առատ հունձքով և պարտության է մատնում մահվանը:

«Արևելքի տղոց» շարժմանը բնորոշ դարձավ կյանքով, անձնական օրինակով և բազմաբնույթ գործունեությամբ նոր սերունդներին կրթելու, դաստիարակելու, ոգեկոչելու միտումը: Իրենց առաքելության բարձր գիտակցությամբ նրանք ակտիվորեն հանդես են գալիս գաղթաշխարհի տարբեր բնագավառներում: Այս սերնդի ներկայացուցիչներից յուրա-

1 Ընդունվել է տպագրության 06.06.2022թ:
2 Շուշանյան Վ., Երկիր հիշատակաց, Հայաստան հրատ., Եր., 1966, էջ341:

քանչյուրը մանկավարժ էր, հրապարակախոս, քաղաքական գործիչ, գրող, խմբագիր[1]: Այստեղից էլ բխում է Մ. Իշխանի այն սկզբունքը, որ գրողի մարդկային նկարագիրն ու նրա ստեղծած գրականությունն ուղիղ համեմատական են: Ըստ նրա՝ որքան գրողը կատարելագործվում է որպես մարդ, այնքան նրա ստեղծած գրականությունը հաստատվում է որպես արժեք: Ըստ Մ. Իշխանի՝ գրական ստեղծագործությունը հնարավոր չէ անջատել կյանքից և հասարակական երևույթներից, որոնց ներսում ապրում է ստեղծագործողը:

***

1938 թ. Մ. Իշխանը լույս է ընծայում «Կրակը» ժողովածուն: Բանաստեղծի մոտ թանձրանում են խոհական ընդգրկումները: Եթե «Տուներու երգը» գրքում առաջնային խնդիր էր կորուսյալ տան հուշի վերապատկերումը, ապա այստեղ քնարական հերոսն արդեն ունի այլ խոհեր: Նոր արժեքների որոնման ճանապարհին բանաստեղծը հայտնվում է երազի և իրականության սահմանագծին, որտեղ երազը նույնքան իրական է, որքան իրականությունը՝ երազ: Իսկ այդ երազը ծնվում է հոգու կրակից: Հոգու կրակը բորբոքվելու է նոր թափով և տարբեր ուղղություններով: Այս դեպքում նշենք, որ «գերիզոր երազը» «Կրակը» գրքում ծավալվում է երկու ուղղությամբ. մեկը դեպի կարոտաբաղձ անցյալ, մյուսը՝ երազային ապագա՝ նոր կյանք:

Քնարական հերոսը, որ քայլում էր օտար քաղաքի «անհարազատ մայթերով», շարունակում է իր ընթացքը: Կյանքը թելադրում է իր պայմանները, փոխվել են նաև հերոսի ցանկությունները: «Տուներու երգը» գրքում հերոսը հուշերի միջոցով վերականգնում է կորուսյալ հայրենիքի պատկերը, նշում, որ օտար հողում գոյատևելու համար անհրաժեշտ է անաղարտ պահել հայոց լեզուն, ուրախանում Հայաստանի զորությամբ և ցնծագին ողջույններ է ուղարկում «Հայաստանի բանվորներուն»: «Կրակը» գրքում տիրող տրամադրությունն այլ է. հեղինակը, ճիշտ է, շարունակում է ցավել կորուսյալ հայրենիքի համար, բայց արդեն հեռավոր, իրական հայրենիքի գոյությունն իրեն ապրելու ուժ է տալիս.

Երբ կը խորհիմ քու վրադ՝
Արևն ամբողջ կը լեցվի ներս հոգիես
Եվ զերդ մահվան դռնեն դարձող մը հիվանդ՝
Սա նոր կյանքին ես կը փարիմ խենթի պես...

1 Տե՛ս Բաղդասարյան Է., Մ. Իշխանի խոհափիլիսոփայական քնարերգությունը, Լրաբեր Հասարակական Գիտությունների, No 3, Եր., 2009:

Կ՚զգամ որ արդ տեղ մը ծաղկած ծառեր կան,
Ձով ջրվեժներ կը կարկաչեն անընդհատ,
Սարերն ի վեր նուրբ կածաններ կը սողան... (էջ 63)

Սա իրական, բայց դեռևս չտեսած հայրենիքի դիպուկ նկարագրությունն է: Որպես անձնվեր հայորդի՝ Մ. Իշխանը անկեղծ ուրախ է հայրենիքի վերաշինման համար, նրան ուժ ու **կրակ** (էներգիա) է տալիս ապրելու համար: Բայց միևնույն ժամանակ Մ. Իշխանը չի մոռանում հայրենիքի մյուս՝ կորուսյալ հատվածի մասին: Այս դեպքում արդեն նահատակներին ոգեկոչելն է անհրաժեշտ.

Գիտե՞ս, անձրև՛, ապրիլի հարս ծառերուն պես
Ի՞նչ հասակներ տապալեցին գիշեր մ՚անհուն...
Ա՝հ, պուտ մը ջուր հասցուր անոնց, այդ լեռնադեզ
Անապատի տապեն պապակ ոսկորներուն...
Հիմա , անձրև՛, ծեր պանդուխտներ կան ամեն տեղ,
Որ հուշերուս ցուրտ կրակին դեմ կը մսի՞ն...
Անոնց խարխուլ հյուղակներուն վրա թիթեղ՝
Թափե երազն իրենց հոտի ոտնաձայնին... (էջ 65)

Անհրաժեշտ է որպես կրակ՝ հույսի երազ տալ պանդուխտներին, որ չմրսեն ցուրտ հուշերից: Եվ հույսի երազն է, որ բորբոքում է հոգու կրակը, որն էլ իր հերթին ապրելու ուժ է տալիս մարդուն: Քնարական հերոսը շարունակում է ապրել իր կյանքը, կրել կորուսյալ հայրենիքի ցավն իր հոգում:

«Կրակը» գրքի իրար հաջորդող երկու բանաստեղծությունները՝ «Կաղանդի գիշեր» և «Ձատկի առավոտ», կարծես թե կապող կամուրջ են օտար քաղաքի անհարազատ մայթերով քայլող «հայու պանդուխտ որդու» և ի բնե երազելու ու իր երազին հասնելու համար ծնված բանաստեղծի միջև: Կաղանդը նոր կյանքի սկիզբն է, միևնույն ժամանակ հիշվում է հինը: Մ. Իշխանի դեպքում հիշվում են չապրված կյանքերը և այն մարդկանց, որոնք կոչված էին ապրելու:

Ուրվականներ կը տանին մեռած դիակն հին-տարվան
Անդունդն ի վար Անհունության դամբանին...
Ծանր է դագաղն այս անցնող, որ կհանգչին հավիտյան
Հազար կյանքեր և վազքն ամբողջ մարդկության,

Ուր կիանգչին և իմ հույսերս մանուկ
Եվ իմ երազս պարման... (էջ76)

Անցնող տարին տանում է նաև պատանության երազը, բայց մնում է նոր երազի հույսը, և վաղվա օրվա համար բորբոքվում են հոգու նոր կրակներ:

Ձատիկը ունի հարության խորհրդանիշ. կյանքի հաղթանակն է: Հարությունը որպես հաղթանակ ընդունելով՝ դեպի կյանք է ընթանում՝ հոգում անթեղված կրակը բորբոքելով, որից վերածնվում է երազը.

Ահա կ'երթամ ես դարձյալ, նման անմեղ հին տղուն,
Մեր մատուռին մեջ նժդեհ ծնրադրել անձկագին,
Հայ տաղերու խորհուրդով հաղորդըվիլ դարերուն
Եվ բարձրանալ պապերուս հրաշաձոր հավատքին... (էջ77)

Հայկական արժեքներն իր մեջ կրելով՝ քայլում է բանաստեղծը դեպի կյանք՝ լիահույս, որ կիրականացնի իր հոգու երազներն ու տենչերը: Իսկ տենչերն արդեն համամարդկային են: Մ. Իշխանը դարձավ իր սիրելի ուսուցչի՝ Լևոն Շանթի հումանիզմի արժանի շարունակողը՝ հետևելով նրա թողած պատգամներին. «Աշխատեցէք մարդ ըլլալ. մարդը տիեզերքի բարձրագույն արժեքն է»[1]: Բանաստեղծը սկսում է կյանքը ճանաչել: Ճանաչումը սկիզբ է առնում որոնումից: Երազի և իրականության սահմանագծին հայտնված քնարական հերոսի համար հնչում է բանաստեղծի քնարական հորդորը, որ անկախ բախտի դաժան խաղերից պետք է անցնել ճամփան բացճակատ՝ հայացքը բոցավառ փառքի հորիզոնին: Հեղինակը սկսում է նախապատրաստել քնարական հերոսի անցումը այլ հորիզոններ, որտեղից ճառագում է մեծ երազը.

Այս չէ քու ճամփադ, հոս չունիս կայան,
Խեղճ գաճաճներու այս ցեղեն չես դուն.
Թո՜ղ հարուածեն քեզ, պահ մը թող ցնծան,
Դուն զարկդ պահե՛ գալիք մարտերուն:
Եվ ահա՜, զգու՛շ, ականջ դիր կուրծքիդ,
Խռովքի մ'անլուր զանգերն արդեն,
Որ քեզ կկանչեն քու մեծ երազիդ
Տղմուտ օրերու տարտամ մշուշեն... (էջ 86)

1 Իշխան Մ., Իմ ուսուցիչներս, Պեյրութ,1984, էջ 86:

Սկսվում է հեղինակի հոգու երազային աշխարհի և իրականության հատումը: Հեղինակը փորձում է ստեղծել իր հոգու աշխարհը՝ երազայինը:

***

«Կեանք եւ երազ»: Շարքը (գրված է 1939-41թթ.), որը պիտի լույս տեսներ «Կրակը» ժողովածուից հետո, տպագրվեց ուշ՝ 1949թ.: «Կեանք եւ երազ» շարքի բնաբանը՝ «Կեանքն իր երազ մը եղավ, ինչպես երազն իրեն կեանք» (էջ 115), բնորոշում է Մ. Իշխանի պոեզիայի ընդգրկումը. այն ասես բանաստեղծի ինքնահաստատման ու ներդաշնակության բանաձև է, որն առնչվում է նայև Լևոն Շանթի ու նրա «Հին աստվածներ» դրամայի աշխարհընկալմանը. «Բարոյական նկարագրի գեղեցկութիւնը եւ գրագէտի կոչումը իր մեջ միաձուլուած ներդաշնակութիւն մըն էին դարձած. ահա թէ ինչու ան չբաժանեց արուեստը գաղափարէն, գեղեցիկը ճշմարտէն, երազը իրականութենէն»[1],- գրում է Մ. Իշխանը իր ուսուցչի մասին: Կյանքի հանդեպ Մուշեղ Իշխանի իմաստասիրական մոտեցումը այն սոսկ քննելու, ճանաչելու մղում չէ, այլ ապրելու կերպ: Բանաստեղծը յուրովի հայացք է ձգում կեցության և գիտակցության, նյութի ու հոգու, երազի ու իրականության վրա և ստեղծում նոր ու յուրահատուկ բարոյագիտություն, որի հիմքում ինքնաճանաչողությունն է, նպատակը՝ սեփական առաքինությունները բարիքի վերածելու ուղին գտնելը, որը տանում է դեպի բնականն ու անձի ազատությունը.

Եթե հոգիդ կապույտին մեջ արփավետ
Չի պարզեր թևն իր երբեք,
Եթե միջոցն է անդունդ և գահավեժ անջրպետ՝
Աչքերուդ դեմ ահաբեկ,
Աշխարհն ունի վեհ գագաթներ ձյունապատ
Եվ բարձունքներ ամպերուն մեջ կորսված,
Որոնց վրա միշտ ազատ՝
Կալանավոր չես հողին, դուն հողածին արարած... (էջ 126)

1949 թ. լույս տեսած «Կեանք եւ երազ» ժողովածուն 1939-41թթ. սփյուռքահայ կյանքի արձագանքն էր[2]: **Երազը՝ որպես կարևոր պայման Սփյուռքի գոյատևման, ոչ միայն հակադրվում, այլ նաև զուգադրվում**

1 Իշխան Մ., Իմ ուսուցիչներս, Պեյրութ,1984, էջ 107:

2 Տե՛ս Գաբրիելյան Վ., Հայաստանի տպագիր բանաստեղծը, Վեմ, No 4, Եր., 2014, էջ VIII:

էր կյանքին՝ դառնալով մեկ իրողություն: Երազը խաբկանք է, կյանքը՝ իրական, բայց հոգնություն, ու մարդը չգիտի վայելքը որտեղ փնտրել, որտեղ գտնել ապաստան՝ փախչելով մեկից, ու այս փնտրտուքը հարատև է, անբաժան մարդկային հոգու էությունից: Կյանքում չգտածը փնտրում են երազում: Իսկ բոլորը երազում են ներդաշնակության մասին: Ներդաշնակ լինել այն աշխարհի հետ, որտեղ ապրում ես:

Ըստ ավանդության՝ հին աշխարհի մտածող Դիոգենեսը ցերեկը լամպը ձեռքին մարդ էր փնտրում: Մ. Իշխանը երազել սկսում էր ոչ թե երեկոյան կամ կիսամութին, այլ «կանգնած լույսին մեջ պայծառ» (էջ 115): Կարևոր է նշել ոչ միայն երազելու համար օրվա պահը, այլ նաև ժամանակահատվածը, թե երբ է երազում.

Ես կ'երազեմ, երբ որ ամեն տեղ հիմա
Լոկ մահասփյուռ թնդանոթներ կը գոռան: (էջ 115)

Պատերազմական ժամանակաշրջան, երբ ամենուր սփռվում էր մահ, բանաստեղծը երազում է՝ մարդասիրության վեհ գաղափարով տարված: Տեսնում ենք երիտասարդին, որ ականջալուր է եղել մոր հրաշազոր հեքիաթին մանուկ հասակում և ցանկացել գտնել «հեքիաթի մատանին»: Սկսվում է մարդու փնտրտուքը կյանքում, փորձում է հասնել իր մանկական երազին: Փնտրում է ամեն տեղ երազ, որն այս դեպքում հրաշագործ մատանին է, սակայն որոնումներն անհաջող են.

Ոչ ոք գիտցավ իր մասին, ոչ մեկ տեղ հետքն իր գտա,
Ծախսեցի գանձն իմ ամբողջ, անցավ գարունը կյանքին,
Չար են մարդիկ ու հեգնող, իսկ ես հոգնած եմ հիմա,
Բայց կ'որոնեմ դեռ անվերջ այդ մոգական մատանին: (էջ 116)

Իսկ որոնումը միայն մեկ նպատակ ունի՝ աշխարհը դարձնել ավելի լավը: Փնտրտուքները երազային պատանուն հասցնում են որոշակի սահմանագծի, որտեղից պետք է սկսվի երազի և կյանքի իրական բախումը: Եվ պատանին, հրեղեն ձին հեծած, հասնում է անմատույց բերդին, «որուն մարմար ոտքին տակ» գալարվում է կյանքի հեղեղը: Բախման ընթացքը չի պատկերված, սակայն շարքն ամբողջությամբ դիտարկելով՝ նկատում ենք, որ **բախման ընթացում երկուստեք ընկրկում եղել է.**

Իր աչվներն անծանոթ ճաճանչներով հմայուն՝
Չբաժանցին իրարմե ճշմարտություն ու պատրանք:
Եվ չգիտցավ աղոթել անոր հոգին անհանդարտ,
Չի երազներն իր էին աղոթք ու տենչ իրացած
Ան իր աշխարհն ստեղծեց միշտ իբրև տեր ու աստված
Եվ հոն մտավ հիացի՜կ ու ապրեցավ իբրև մարդ… (էջ 118)

Իրական կյանքում հերոսը ստեղծում է իր կյանքը՝ իր ներաշխարհը: Իր ներաշխարհից էլ դատողություններ է անում կյանքի, երազի ու հավերժականի, սիրո ու աստվածայինի վերաբերյալ.

Մարդիկ՝ մինակ, անընկեր տեսան հոս զինք հավիտյան,
Երբ որ ամեն իրիկուն իրենց քովեն անցներ ան՝
Ամենաքաղցր էակին մտերմության թևանցուկ…
Մարդիկ՝ ընկեր թե ոսոխ՝ որոնեցին միշտ իրեն
Թշվառ ու մութ իր կյանքին հովիտներուն մեջ անձուկ
Եվ գտան մե՜ծ խնդության ոգեսլաց բարձունքեն… (էջ120)

Հերոսն ապրում է իր կյանքը՝ անկախ տիրող միջավայրից: Սա երազող հերոսի մի տեսակն է, որին ընդունում են այնպես, ինչպես կա. նա սիրում է ծաղկումը՝ որպես ոգեղեն լույս: Երազող հերոսը տեսնում է միայն գեղեցիկը և ապրում իր կանոններով՝ առաջնորդվելով կյանքի իր հավատամքով: Շարքում տեսնում ենք նաև երազող մարդուն, ում համարում են խենթ և ծաղրում են՝ հաշվի չառնելով, որ բոլորն իրենց հոգու խորքում կյանքի արքա են.

Բայց ո՞վ արդյոք չի կարծեր իր հոգիին մեջ գաղտնի,
Թե ինք արքան է կյանքին.
Մինչդեռ լույսի տակ պայծառ «խենթը» երազն իր կ‘ապրի՝
Ձայն կըթաղե «խելացին»: (էջ121)

Կյանքի և երազի բախումը դառնում է անխուսափելի: Հնարավոր գիտակցված բախման հետևանքով ընկրկում է երազը, բայց ոչ երբեք պարտվում, այլ կազմակերպվում.

Եվ արդ անոնք, որ թևավոր ու հերարձակ
Ձահակիրներն էին ձեր քաջ,

Անոնք, որոնց կյանքն էր անհու՞ն երգ ու խոյանք,
Կորաքամակ կ՚երթան առաջ,
Օրվան տխուր բերքը շալակած կ՚երթան լռին…
Բեռնակիրնե՞ր ճակատագրին… (էջ 137)

Փոխվում է երազի կերպը, բայց երազը չի մահանում: Հոգին չի կարող ապրել առանց երազի.

Հոգին աներազ՝
Աստուծո լուսեղ
Տաճարին մեջտեղ՝
Յուղասպառ կանթեղ. (էջ 135)

Փոխվում է երազի արտահայտման ձևը. հերոսը տևականորեն պայքարում է կյանքի և երազի սահմանագծին, պայքարում է երազի համար, իսկ այդ ընթացքում գալիս է հեռանալու ժամանակը: Շարքի վերջին հատվածում արդեն տեսնում ենք երազող-փնտրող հերոսին, որն այս դեպքում պարտիզպանն է: Նա իր կյանքում աշխատել է աճեցնել այն ծառը, որը պետք է իր երազած պտուղները տա: Կյանքի մայրամուտին չի հասել իր երազանքին և իր ժառանգին է թողնում երազը՝ գտնելու «ոսկեձողիկ խնձորը» և պապենական այգին: Ուշարժան է այստեղ այն հանգամանքը, որ որդին գտնում է խնձորը և բերում հորը ցույց տալու, սակայն հայրն արդեն դա չի տեսնում.

-Հայրի՞կ, հայրի՞կ, տե՛ս քու երազը ծաղկած՝
Ոսկեխնձոր իրական…
Բայց ծերունին, որ արիշի շուքին տակ
Ընկողմանած հանդարտորեն կը ննջեր
Հավերժական քունի մեջ՝
Փակ աչվներն իր չբացավ ալ երբեք: (էջ 143)

Օտարության մեջ ապրող կարոտաբաղձ հայը չհասավ իր երազին՝ կորուսյալ հայրենքին, և իր երազի իրականացումը թողեց ժառանգին, որ իրագործեց այն: Հերոսը հասավ իր երազանքին: Սա Մ. Իշխանի երազն է, որ օտարության մեջ ապրող ժառանգները շարունակեն իր գործը: Երազի լուծման տարբերակներից մեկն էլ սա է: Երազի գեղեցիկ լուծում. երազող բանաստեղծի ոսկի երազը իրագործում է ժառանգը: **Երազը**

բանաստեղծի մոտ պահում է վերադարձի հույսը, ծննդավայրի հուսը, որոնք պատվար են ուծացման դեմ և միջոց երազագծին հասնելու ճանապարհին: Այս դիտանկյունից ենք մոտենում «Կեանք եւ երազ» շարքի վերջին՝ Դ հատվածին: Կյանքին երազային հենց այս կետից է մոտենում նաև Համաստեղը: Իր «Հայաստանի լեռներուն սրնգահարը» երաժշտական դրամայի ընծայականում նա գրում է. «Նուէր Ամերիկահայութեան, որ ծերացաւ աչքերուն մեջ կարօտ երկրին, որ ապրեցաւ, երազեց ու երազով դարձուց իր կեանքն իրական»[1]: Հենց երազն է դարձնում կյանքն իրական, երազն է փոքր-ինչ ամոքում ցավը, կորստի մորմոքը: Ահա թե ինչու է Վեհանույշ Թեքյանը ասում. «Հայրենիքի ամենակարող ույժի, անոր անմահութեան սերմերուն մասին խոսքեր են գրեթե մեր բոլո՛ր գրական սերունդները, բայց երա՛զը Մուշեղ Իշխանի սերունդն է, որ հնարեց – կարօտ ու երազ ամէն գրողի անձկութիւնն են, կարօտը կ'այրէ, մինչ երազը կ'դարմանէ»[2]:

Գրքի վերջում արդեն հերոսը դիմում է երազին, նշում, որ անկախ պայմաններից՝ քանի կա երազը, ինքն անմահ կմնա և կշարունակի գործել, կերջանկանա անձնական սիրով՝ բարիք տալով ամենքին.

Քանի որ վառ ես, Երա՛զ, ես միշտ անմահ կը ,մնամ,
Ինչպես երբեք չծնկած սիրո մ' անուրջը ծփուն…
Ես դարերու խորհուրդին կախարդ ճամփորդն ամեն ժամ՝
Անսպառ երգը կյանքիս կը բաժնեմ չորս հովերուն: (էջ 150)

***

1958 թ. Մ. Իշխանի նոր՝ **«Ողջո՛յն քեզ, կեանք»** գրքի խորագրում «Կեանք եւ երազ»-ից մնաց միայն կյանքը: Եվ այն կարևորվեց հատուկ վերաբերմունքով՝ «Ողջո՛յն քեզ, կեանք» արտահայտությամբ, որ պայմանավորված էր այդ տարիներին Մերձավոր Արևելքի գաղթօջախներում հայ կյանքի աշխուժացմամբ, ապա կյանքի դժվարություններին, ուծացման տագնապներին դիմագրավելու նոր հայացքով, այն է՝ փառաբանել բնությունը, մարդուն, նրան տված կյանքը, ինչպես կա: Գիրքը ողջույնի յոթ բանաստեղծություններով ամբողջացած շարք-պոեմ է[3]: Ողջունողը հենց ինքն՝ «Հայաստանի տարագիր բանաստեղծը», որն իր ողջույնը հղում է ոչ միայն իր ազգակիցներին, այլ նաև «մարդոց և աշխարհին»:

1 Համաստեղ, Երկեր, Եր., 1989, էջ 641:
2 Թեքեյան Վ., նշվ. հոդվ., էջ 55:
3 Տե՛ս Գաբրիելյան Վ., Հայաստանի տարագիր բանաստեղծը, Վեմ, №4, Եր., 2014, էջ X:

Մինաս Թեոլեոլյանը գրում է. ««Ողջո՜յն քեզ, կեանք» poeme a these մըն է, որ կնգտի հոռետես և նահանջական ամեն աշխարհայացք ժխտել ու փառավորել կենսասիրական վարդապետությունը»[1]:

Ողջունողը, գերված կյանքի սիրուց, ուզում է«եղբայրական իր ողջույնին մէջ, իր եղբայրական սերն ուղղել ամբողջ աշխարհին: Ձևական կառույցի տեսակետով այս շարքը նման է Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմին, սակայն գաղափարական արտահայտչականությունը ճիշտ հակառակն է:

Ժողովածուն գաղափարապես հակադրվում է Իսահակյանի «նիհիլիզմին», այն ամբողջապես կյանքի պաշտամունք և փառաբանում է: Մ. Իշխանը ոխ ու ցավ չունի կյանքի հանդեպ: Նա պատրաստ է ապրել իրեն տրված տառապանքն ու երջանկությունը հավասարապես նույն երանգներով և պայքարելու նույն սրբազան տենչով.

-Ողջու՜յն քեզ, կեա՜նք, դուն շքեղ փառք, դուն հաղթանա՜կ,
Ողջու՜յն ցավիդ, հառաչներիդ ու խավարիդ,
Ողջու՜յն ծափիդ ու ծիծաղիդ լույսերուդ…
Ինչպես որ կաս՝ մերթ արտասուք և մերթ ժպիտ՝
Դու՜ն ես միակ ուժն իրական, խորախորհուրդ,
Ինչպես որ կաս՝ ես կ‘ընդունեմ, քեզ գրկաբաց,
Թևերս զույգ քեզ ընդառաջ այսպես պարզած: (էջ 152)

Շարքի յոթ առանձին մասերի մեջ Մ. Իշխանը ողջունում է բնությունը, մարդուն, սերը, կնոջը, կյանքն ու Արարչին: Բոլորի մոտ բանաստեղծը փորձում է գտնել մարդկային բարդ զգացումներ, կյանքը հաճելի և գեղեցիկ դարձնելու անհոգ ցանկություն, ցանկանում է տարածել հաշտ ու սիրով ապրելու կոչ, ճանաչել սերը և երբեք չմնալ սիրակարոտ, և, որ ամենակարևորն է, կյանքից տրվող ամեն զգացում դիմավորել բնականոն կերպով:

Եվ կյանքը դիտել որպես հոգեպես վերանորոգվելու մշտական հնարավորություն.

Քառասնամյակն անցա՜վ արդեն, որ ամեն ժամ
Քեզ կը դիտեմ, քեզ կ’ ըմբոշխնեմ և կ’ արբենամ,
Բայց կը թվի՝ թե ես դեռ նոր կը տեսնեմ քեզ,
Եվ կը մնամ քեզմով անկուշտ, քեզմով անհագ: (էջ 152)

1 Թեոլեոլյան Մ., Ողջո՜յն քեզ, կեանք, Այգ, Բեյրութ, 7.05.1958, էջ 2:

Հեղինակը իր ողջույններն է հղում ամբողջ աշխարհին, մարդկանց, բոլոր նրանց, ովքեր կան, և ովքեր նոր պետք է գան, և հպարտ է, որ ինքը կա և տիեզերքի մասն է.

Թե ես հպարտ մասն եմ կյանքին, տիեզերքին:
Թե ես կ՚ ապրիմ, ես կը շնչեմ, ես կա՛մ, ես կա՛մ... (էջ 163)

Շարքերի ընդհանուր գաղափարախոսությունը մարդերգությունն է: Ազգայինից դեպի համամարդկայինը տանող կամուրջը երազն է, որն ընկած է իրականի ու անիրականի սահմանագծում:

Հովհաննիսյան Միհրան - հետաքրքրության ոլորտը՝ հայ գրականություն, հայ գրականության պատմություն և տեսություն: Գիտական մամուլում հրատարակել է հոդվածներ:

MIHRAN HOVHANNISYAN: MUSHEGH ISHKHAN. ON THE BORDER OF LIFE AND DREAM: Mushegh Ishkhan embodies the image of a man whose work is the direct embodiment of his lived life. A characteristic feature of his entire poetic system is that the collections were created and alternated in parallel with the stages of his life, according to the logic of the development of his inner world and worldview. He is a chronicle of his feelings, emotions, experiences, and his poetry collections are their personification and generalization. The collections are poetic manifestations of the experiences and anxieties of his generation, as well as instructions aimed not only at the Armenian wandering around the world, but also at the “strange human being” living under the sun: firstly, create your soul home in Armenian, build it in the vast space (“Song of Houses”, 1936), then kindle a flame covered with ashes, ignite the hearth (“Fire”, 1938), live your life like a dream, and dream like life (“Life and dream” 1949), accept the gifts of life (“Hello Life” 1958), and look back again and resign yourself to the fact that life is an experience, and a “strange human being” suffers (“Suffering” 1968), create, fertilize, and in the golden autumn distribute the harvest to everyone (“Golden Autumn”, 1963), and at the end of your life, realize that death is just a return to the primary, sympathize with the slow decomposition of your relatives (“Sunset”, 1986 .), before sunset, a little more, but brightly illuminate the world, praising the light and peaceful life, the meaning of life (“Evening St. under the bombs” 1991).

Let’s try to understand the “Mystery of Life” according to M. Ishkhan’s collections of poems “Fire”, “Wound and Sleep”, “Hello, Life”.

When searching for new values, the poet finds himself on the border of dreams and reality, where a dream is the same reality as reality is a dream. And this dream is born from the flame of the soul. The flame of the soul will ignite with renewed vigor

and in different directions. Note that in the book the “powerful dream” develops in two directions: one towards a nostalgic past, and the other towards a new life. The dream, as an important condition for the existence of the Diaspora, not only goes opposite to life, but also in parallel, becoming one whole reality. A dream is a mirage, and life is a reality, but hard, and a person does not know where to look for pleasure, where to look for shelter, and this search is eternal, inseparable from the human soul. A person in a dream is looking for what he does not find in life. And everyone dreams of harmony. To be in harmony with the world where you live. At the end of the collection, the hero turns to a dream, notes that regardless of the conditions, as long as there is a dream, he will be immortal and will create, be happy with personal love, giving good to everyone around.

The general ideology of the poetic collection is a song about human. A dream is a bridge that connects the national with the universal, which is on the border of reality and unreality. These collections are an appeal from national pain to all human pain, as well as a manifestation of love towards life.

Keywords: Mushegh Ishkhan, “fire”, dream of hope, symbol of resurrection, victory of life, diaspora, fairy tale ring, welcoming.

МИГРАН ОГАНИСЯН: МУШЕГ ИШХАН. НА ГРАНИ ЖИЗНИ И МЕЧТЫ: Мушег Ишхан олицетворчет образ человека, творчество которого является непосредственным воплощением его прожитой жизни. Характерным признаком всей его поэтической системы является то, что сборники создавались и чередовались параллельно с этапами его жизни- по логике развития его внутреннего мира и мировоззрения. Он является летописью своих чувств, эмоций, переживаний, и его поэтические сборники являются их олицетворением и обобщением. Сборники- это поэтические проявления переживаний и тревог его поколения, а также наставления, направленные не только на армянина, скитающегося по всему миру, но и на «странное человеческое существо», живущего под солнцем: во-первых, создай свой дом души на армянском языке, построй его в необъятном космосе («Песня домов» 1936 г.), затем разжигай пламя, прикрытое пеплом, воспламени очаг («Огонь» 1938 г.), проживай свою жизнь, как мечту, а мечту- как жизнь («Жизнь и сон» 1949 г.), прими дары жизни («Здравствуй, жизнь» 1958 г.), и снова оглянись и смирись с тем, что жизнь- это переживания, и страдает «странное человеческое существо» («Страдания» 1968 г.), создавай, оплодотворяй, и золотой осенью всем раздавай плоды («Золотая осень» 1963 г.), а на закате своей жизни осознавай, что смерть- это всего лишь возвращение к первичному, сочувствуй медленному разложению своих сородичей («Закат», 1986 г.), до заката еще немного, но ярко освети мир, хваля свет и мирную жизнь, смысл жизни («Вечерний свет под бомбами» 1991 г.).

Давайте попробуем понять «Таинство жизни» по сборникам стихов М. Ишхана «Огонь», «Рана и сон», «Здравствуй, жизнь».

При поиске новых ценностей, поэт оказывается на грани мечты и реальности, где мечта- такая же реальность, как и реальность- мечта. А эта мечта рождается из пламени души. Пламя души загорится с новой силой и в разных направлениях. Отметим, что в книге «мощный сон» развивается в двух направлениях: одно- к ностальгическому прошлому, а другое- к новой жизни. Мечта- как важное условие для существования Диаспоры, не только идет противоположно к жизни, но и параллельно, становясь одной целой реальностью. Мечта- это мираж, а жизнь- реальность, но тяжелая, и человек не знает, где искать наслаждение, где искать приют, и этот поиск- вечен, неотъемлем от человеческой души. Человек в мечте ищет то, чего не находит в жизни. А все мечтают о гармонии. Быть в гармонии с тем миром, где ты живешь. В конце сборника герой обращается к мечте, отмечает, что вне зависимости от условий, пока есть мечта, он будет бессмертным и будет творить, будет счастлив с личной любовью, даря добро всем вокруг.

Общая идеология поэтического сборника- песнь о человеке. Мечта- это мост, связывающий национальное с общечеловеческим, который находится на грани реальности и нереальности. Эти сборники- обращение от национальной боли ко всей человеческой, а также проявление любви по отношению к жизни.

Ключевые слова: Мушег Ишхан, «огонь», мечта надежды, символ воскресения, победа жизни, диаспора, кольцо сказки, приветствующий.

Օգտագործված գրականություն

Սկզբնաղբյուրներ

1. Իշխան Մ., Երկեր, Նաիրի հրատ., Եր., 1999, 592 էջ:
2. Իշխան Մ., Իմ ուսուցիչներս, Բեյրութ, 1984, 208 էջ:
3. Համաստեղ, Երկեր, Եր., 1989, 704 էջ:
4. Շուշանյան Վ., Երկիր հիշատակաց, Հայաստան հրատ., Եր., 1966, 424 էջ:
5. Վահան Թեքեյան. Ազնվական քերթողը: Ուս ձեռնարկ, կազմեց և առաջաբանը գրեց Ավագյան Ա., ԵՊՀ հրատ., Եր., 2018, 216 էջ:

Ամսագրեր, հոդվածներ

1. Բաղդասարյան Է., Մ. Իշխանի խոհափիլիսոփայական քնարերգությունը, Լրաբեր Հասարակական Գիտությունների, №3, Եր., 2009, 10 էջ:
2. Գաբրիելյան Վ., Հայաստանի տարագիր բանաստեղծը, Վեմ, № 4, Եր., 2014, 23 էջ:
3. Թեոլեոյան Մ., Ողջո՛յն քեզ, կեանք, Այգ, Բեյրութ, 7.05.1958:
4. Թեքեյան Վ., Մուշեղ Իշխան՝ Մրգաստանին լիութիւն, Գարուն, 1994, № 2:
5. Մարմարա, Պոլիս, 11.07.1969, 04.09.1969, 15.09.1969:

DOI: 10.54503/1829-0116-2022.1-100